

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻ 26

28 ՅՈՒՆԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթերի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար տուած դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտատպման 12 Յրանք կամ 5 բուլղի: Թղթատարական ծախքը տնօրէնութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն տնօրէնութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռն-Քլ: ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (مأسيس) غرضه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դաւաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՐԵԼԻՆ

Ի՞նչ է երախայ մը նիհարէ և չի զաւարիւր նէ, ախորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և ակույցները — որոնք չեն մեծնարկոր նէ — ոչ բնականապէս միւս աղետները կ'աւելցնէ՝ թող իրեն արուի.



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար ախորժակի կերակուր և գէղ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Սոյոր շուտով կ'ը տեսնէ թե ինչպէս երախային բոլոր վիշտերը անմիջապէս կը դադրին. որպէս թէ նոր արիուն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչնով՝ մանկան ախտերը առողջութեան և զուարդութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուտելիք և) բնական և ախորժակով կ'ըլլաւ. Արական զաւարիւր և պղտիկ ձերմակ ակույցները առանձնաւի և վիշտերու կ'ընկնին երեան ելլել: Ըստօթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գիրութիւն և զաւարիւր կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւն կը պատճառէ:

ԸՄԻՕԹԻ ԲԵՂԵԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր տղայոց Սիրելին է և զանոնք շուտով վարդապղն երեղութիւն և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փոխէ: Ըստօթի Բաղադրութիւնը վրան այս նշանով վարդապղն փաթեթի մէջ ծաղուած շիշերէն կը ծանչուի:

Հիշերու վրայ անոր ուշադրութիւն ընել պէտք է:

Իսկուս Գեղարքունիք և Գեղարքունիքի իւր ծախէն:

Ա.ՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ զընդունելէ՝ 100ին 15 զեղչով:

Ա.ՄՐԱՆ ԱՌԹԻԻ

կրսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցի մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ՆԱՎՐՈՒՆԱՆ և Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինատանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոտաւեք եւ առողջարար թէյերէն, համողութեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք սառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու:

Ճէլալ պէյ Իւան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն զննու պէտք ունեցողները կրնան զիմեւ կամուրջին գլուխը լրագրաւաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդայիզի ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր., եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆոլի-Տրամաթիք եւայլն թաղարոնները, նաեւ Պոլսոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թաղարոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հավր-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմակերպչական կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն: Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հաւստ. — Պօլիս, Մահուտ փաշա, Պէոյիւք Երլտըղ խան, թիւ 14, Լա Գոնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Փառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը հղող անբիւխ վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

ՄԱՍԻՆ

52^ր ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 26

28 ՅՈՒՆԻՍ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յիշատակին յարգանքը (Թարգմանչաց սօցին առթիւ) ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ.—Բառերու երա-
ժրեսուքիւն մը. ՌԸՆԷ ԿԻԼ. քարգմ. ԶԱՊԷԼ ՆՍԱՅԵԱՆ.—Գլխուս եկածներէն. «Մեծ պար-
գեւը». ԳՐԻԶԱՆԹԷՄ.—Աղջկան մը օրագիրէն քաղուած. (Նորավեպ) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆ-
ՆԷՍԵԱՆ.—Ուրուագիծներ.—Վարկէն օկան. «Հ. Գաբրիել Վրդ. Մենեվիբեան». ԳԱՄԷՐ :
—Պատշտումս (Բանաստեղծութիւն) Վ.—Երուսաղեմի նորընտիր լուսարարապետը. Մ. ՆԱ-
ԹԱՆԵԱՆ.—Գաւառացի կիներ. ՇԱՀԱՐԻԿ.—Խմբագրական Նօթեր :

ՅԻԺԱՏԱԿԻՆ ՅԱՐԳԱՆՔԸ

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

Մայր Տաճարի 1600ամեակի կրօնային ներ-
շնչութիւններուն հետ, ուրիշ մեծագոյն յիշատակ
մընալ կ'ոգեւորէ զմեզ այս օրերը. էջմիածնի
հիմնարկութիւնը որ քրիստոնէութեան վերջ-
նական և հանդիսաւոր հաստատումն է հայ
հոգիներու վրայ, ներքին իրական աղերս մը
ունի գիրի գիւտին յառաջ բերած գրական
հոգեւոր շարժումին հետ :

Դար մը անցած էր յորմէհետէ Մայր Ա-
թուին գեղակերտ կամարներուն տակ կը
հնչէր Աւետարանին փրկարար քարոզութիւնը :
Բայց առանց հայ տառերու, առանց հայերէն
գիրքերու, առանց հայախօս Աւետարանի,
Քրիստոնէութիւնը սօսիներուն սօսափիւնովը
միայն պիտի չնչէր հայ անկանջին, առանց
նորոգելու սիրտերը. և կամ, ոսկեծղի գի-
ցուհիի մը հմայքին տակ՝ Ասորեստանեայ
գաղջ կրօնքի մը մեղկութեամբ պիտի փո-
խանակուէր, առանց քրիստոնէական նուր-
բումի խմորը տալու հայ խառնուածքին ու
նկարագրին :

Դ. ՐԳ գարուն մէջ, Քրիստոնէական հա-
ւատքը իր սրբութեամբն ու պայծառու-
թեամբը գեւ. ազնուացուցած և զուարթա-

ցուցած էր հոգիները : Կուսապաշտութեան մը
ապլը տակաւին թանձր էր և ճնշող : Նարե-
կացի Մեծ վարդապետին այբբենարանը մը-
տաւորական այն հրաշալի ոյժը եղաւ, այն
անսպառ կենդանութիւնը, որ Եղեկիէլեան
Աստուածային շունչով մը հիմնապէս նորոգեց
և կազմակերպեց հայ հոգեկան կեանքը :
Լուսաւորչին հաւատքը Ոսկեդարու վերածը-
նութեամբը մշտապառ փայլեցաւ : Սահակայ
և Մեսրոպայ Աստուածաշնչական դործունէ-
ութիւնը՝ իր լայն ծաւալումներովը՝ Հայ. Ե-
կեղեցին իր պէտքերուն բարձրութեան վրայ
դրաւ, հոգեկան գերակշռութիւն մը տալով
անոր կազմուածքին :

Մեր հայրերը խորունկ բնազդով մը փա-
րեցան իրենց Եկեղեցիին, ուր քրիստոնէա-
կան ոգին իր ամէնէն հզօր և ճաճանչա-
գեղ արտայայտութիւնը գտաւ : Մեր Եկե-
ղեցին քրիստոնէութեան գեղեցիկ և ըզ-
մայլելի դրուագները կը պարզէ, և հայ
հաւատացեալը այդ բարոյական նուիրագոր-
ծումին մէջ տեսաւ իր էութեան լայնարձակ
փթիթումը : Ու տակաւին ինչ չնորհալի պար-
զութեամբ հայ Եկեղեցւոյ ինքնութիւնը եր-

եւան պիտի դայ, եթէ իր անցեալին չատ մը էջերը՝ ողջամիտ քննադատութեան չունէին տակ, թօթափեն օտար հովերէ եկած դիդուած փոշիներու ստուար խաւը:

Սակայն ինչպէս պէտք է ճշմարտապէս արժեցնել 1600ամեայ Յորելեանը կամ յարգել թարգմանչաց յիշատակը, որոնք իրենց նշանակութեան և ամբողջութեան մէջ իրարու կը միանան և կը նոյնանան: — Պէտք է զարգացնել հոգեւոր կեանքը և ժողովրդականացնել Աւետարանը: Թարգմանիչներու գործը մեր հիացումը կը բռնադատէ, երբ այնքան աննպաստ պայմաններու տակ՝ հայախօս Աստուածաշունչ մը նուիրեցին ժողովրդին, մինչդեռ Մայր Աթոռը՝ տպագրութեան արդի կատարելագործութեամբը՝ դեռ ի վիճակի չէ հրատարակելու, ընտիր օրինակէ մը, մաքուր՝ դիւրամատչելի և դիւրիմանալի (ըսել կ'ուզեմ աշխարհաբարն ալ) Ս. Գիրք մը: Եւ սակայն կենսական պէտք մըն է ասիկա. վասն զի ցորչափ հայ ժողովուրդը չի կարդար Աստուածաշունչը, անհասկնալի պիտի մնան իրեն՝ եկեղեցոյ հոգեշունչ ընթերցումները, շարականներու վսեմ բանաստեղծութիւնը և բեմին քարոզութիւնը:

Ուրիշ վերահաս վտանգ մըն ալ նիւթականացման յարաճուն ձգտումն է, ինչ որ խորապէս կը վնասէ քրիստոնէական ոգիին: Առանց ոգիի՝ ամէն բան նիւթ է և ամուլթիւն: Ինչպէս գաղափարը լոյսն է բաւին, ոգին ալ կեանքն է ամէն հայտատութեան և մարմնոյ: Քրիստոնէութիւնը իր առաջին քայլերուն մէջ ուշադիր ինքնամփոփումով մը՝ ջանաց պաշտպանել ինքզինքը այն աշխարհականացման բուռն հոսանքին դէմ որ ամէն կողմէ կը ճնշէր իր նորակազմ գոյութիւնը: Այդ վտանգը անցած չէ տակաւին. այդ աշխարհային տարրը ամէն ատեն կ'ուղէ սպրդիլ և արմատանալ հոգեւոր հողին վրայ և գրաւել հաւատքին տեղը: Այս առիթով պէտք է խոստովանինք թէ՛ եկեղեցական ոգին չատ թոյլ է կրօնի պաշտօնեաներու մէջ, մինչդեռ այդ անշուշտօրէ տարրը, ոգին պէտք էր ըլլար առաջին և գլխաւոր պայմանը՝ եկեղեցական սքեմը պատուով կրելու համար: Մեր մէջ

չի խօսիր այն երկնային ձայնը որ երբեմն կը խօսէր Սահակի Մեսրոպի, և այն բոլոր լուսապսակ եկեղեցական հայերու մէջ որ մեր հաւատքին փառքերը կը կազմեն:

Հոգեւորը կարեւոր բաժին մը չի գրաւեր մեր ընտանեկան յարկերուն մէջ ալ, ուր բարեպաշտութիւնը իր արտաքնութեամբը աւելի անած և իր ներքին արժէքը կորսնցուցած է, մինչ «պարտէր զայս առնել և զայն չթողուլ»: Հակասութիւն մըն է անշուշտ այս երևույթը մեր կրօնական կեանքին մէջ, քանի որ Հայը ի բնէ կրօնասէր է, ներոյժ ոգեկանութեամբ մը, և բարոյական բարձրութիւններու ընդունակ: Ո՛չ լատին ցեղին ծայրայեղ պերճասիրութիւնն ունի, որ փորձած է արուեստը իր բոլոր երանգներովը եկեղեցոյ մէջ ներմուծել, և ոչ սաքսոն ցեղին մերկ պարզասիրութիւնը ուր զգացումներդ կը յրտանան, այլ արուեստին այնչափ տեղ տուած է իր սրբավայրին մէջ՝ որքան նա չիլասեր ոգիին:

Այս տողերը գրած ատենս զուարթ զգացում մը կը լուսաւորէ հոգիս, որ թարգմանչաց յիշատակէն կը ճառագայթէ: Սահակ և Մեսրոպ՝ դարերով հեռացած մեզմէ, իրենց գերեզմաններու խորէն դեռ կը խոնարհեցնեն մեր հոգիները իրենց բարձր տեսլականներուն և վարիչ ոյժն են մեր կրօնական դործունէութեան: Դպրութեան մարդիկ չեն մեռնիր երբեք. մահը փառաց տաճարին մուտքն է իրենց համար: Սահակ Մեսրոպ իրենց գործակից թարգմանիչներուն հետ միասին անդուգակօսն և շողջողուն համաստեղութիւնն են մեր գրական երկնքին, ուր տասնըհինգ դարերէ ի վեր աննման շողերով և գեղեցկութեամբ կը փայլին:

Ուրեմն, Մայր Աթոռի 1600ամեակին չափ նշանակալից և պարտաւորիչ չէ՞ հանդիսատարութեամբ մը տօնել Գիբի Գիւսին 1500ամեակն ալ, որ նոյնքան բարձր զգացումներով պիտի ներշնչէ և ծագեցնէ մեր գրական և հոգեւոր կեանքը: Եւ Ս. Գրիգորի, Սահայ և Մեսրոպայ յիշատակին այն ատենն արժանաւորապէս նուիրած կ'ըլլանք մեր պաշտօնն ու մեծարանքը, երբ վաղանցիկ ու վայրկեանական զգացումներու տեղ Ս. Գիրքը մատչելի

կ'ընենք ժողովրդին, բեմը միշտ խօսուեն եւ ոգևորուած կը պահենք հոգեւէր եւ սրբամաքուր քարոզիչներով, որոնց խօսքը իրենց ներքին կեանքին, իրենց հոգեւոր փոձառութեան եւ կրօնական գիտակցութեան ցոլանքն է ըլլայ. եւ երբ մեր եկեղեցական հայրերու մատենագրութեան փառաւոր էջերը, որ մեր կրօնական կեանքին շքեղ դրուագները կը յօրինեն, կը ծանօթացնենք հայ համայնքին, անհուն սիրով մը կապելով զայն իր եկեղեցւոյն հետ:

Արմատ

ՍԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

ՅՈՒՍԷՓ-ԻԶՄԻՐԵԱՆՅ

ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ՀԱՆԴԵՍՐ

Հինգշաբթի, տօն Ս. Թարգմանչաց, ժամ 3. Դալաթիոյ ժողովարարն իր հանդիսական օրերու երեւոյթը առած է: Կը նախադասէ Օրմանեան Ս. Պատրիարքը՝ որ քիչ առաջ քարոզ խօսած է եկեղեցիին մէջ, օրուան տօնին վրայ: Սրահին ճակատը կ'երեւան բարեկիշատակ Մկրտիչ Սանասարեանցի եւ Յովսէփ Իզմիրեանցի պատկերները: Մէջտեղը, կանանց ուղանին շուրջը, բոլորուած է Իզմիրեանց Գրական Յանձնաժողովը՝ ատենապետ Վսեմ. Գարրիէլ էֆ. Նորատուհեան, ատենադպիր Տ. Յովհ. Ա. քահանայ Մկրեան, եւ անդամները՝ Երէցեան Սրբազան, Տոքթ. Թորգոմեան, Վահան էֆ. Էսեան: Հոն են նաեւ Վարչութեան եւ Ուսումն. Խորհուրդի անդամներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, Բողոքական Հայոց ազգայնորդ, Հ. Գարրիէլ Մէնէվիչեան, Բրոֆ. Ճէճիգեան, Թ. Թէրզեան, Մ. Աճէմեան, Ռ. Յ. Պէրպէրեան, Յակոբ Ոսկան էֆ. ներքը, Մուշեղ եւ Բարդէն վարդապետները, լրագրագետներ, ուսուցիչներ եւ այլն: Առեւտրական ու սեղանաւորական դասէն՝ Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան եւ ուրիշ ծանօթ անձնաւորութիւններ: Խոր լուծեան մը մէջտեղ՝ ոտքի կ'ելլէ Տ. Մկրեան Հայրը եւ կը կարդայ Յանձնաժողովին ընդարձակ տեղեկագիրը որ մեծ հետաքրքրութեամբ կ'ունենդրուի: Այս երկամեայ չըջանին մէջ ներկայացուած են 10 եր-

կախրութիւններ որոնցմէ ճը քննութեան չեն ենթարկուած, Բարդէն Վրդ. Նիքիթ Եկեղեցական պատմութեան եւ Յ. Գ. Մամբրեանի Պրէքս երաժշտ. Միսախանը շատ հակիրճ ըլլալուն համար, իսկ ուրիշ 3 դործեր ալ Մրցանակի պայմաններուն չի համապատասխանելուն համար, թէեւ օգտակար ու շահական դործեր ըլլան ամէնքն ալ: Մընացեալներէն ո'չ մէկը գերակշիռ յատկութիւններով օժտուած եւ Ա. մրցացակի բացարձակապէս արժանի դատուած չըլլալով՝ Յմական օամ. ոսկիի Բ. մրցանակ յատկացուած են Սմբատ վրդ. Սատտէթեանի Նեքսես Լամբրոնացի եւ Խաչիկ Լեւոնեանի Աղթամարայ Կաթողիկոսութիւնը երկախրութեանց: Նոյնպէս 20 ոսկիի Գ. Մրցանակ ժը Բ. Ս. Պոլյանքի կամ Հարֆ գաւառ դործին որ ընտանեկան սովորութեանց վրայ ուսումնասիրութիւն մըն է:

Յանձնաժողովին կողմէ քննութեան ենթարկուած՝ բայց մրցանակի արժանի չի դատուած դործերն են՝ Մարկոս Աղաբէգեանի Կիլիկիոյ Հայք եւ Միհրան Յովհաննէսեանի Քննական Պատմութիւն ժ. Պաբոս հայ գրագրութեան երկախրութիւնները որոնց մասին քննիչներուն գիտողութիւնները կը թուէ տեղեկագիրը, գնահատելով հանդերձ հեղինակներուն աշխատութիւնը: Աղաբէգեան էֆ. որ ներկայ է, անհամբեր շարժումներ կ'ընէ իր աթոռին վրայ եւ իր ալեւոր դէմքը դժգոհ արտայայտութիւն մը կ'առնէ:

Տեղեկագրի ընթերցումէն ետքը, Տիգրան էֆ. Եռասօփեան խօսք առնելով՝ Վարչութեան կողմէ շնորհակալութիւն կը յայտնէ Յանձնաժողովի անդամներուն եւ քննիչներուն: Ս. Պատրիարք Հայրը հակիրճ տեսութիւն մը կ'ընէ այս Գրական Մրցանակին հաստատուելէն ի վեր տուած օգտակար արդիւնքներուն վրայ, կ'օրհնէ անձա՛ծ իր ջանքերը Յանձնաժողովին եւ մասնաւորապէս անոր յարգելի ատենապետին՝ Նորատուհեան Էֆ. ի աշխատութիւնը, եւ յիշելով Գիրի գիւառը, Թարգմանչաց տօնը եւ բարեկիշատակ կտակաւորաբար, հանդէսը կը փակէ «Հոգւոց» մը արտասանելով որուն կ'ունենդրեն ներկաները գլխաւորապէս:

Յաջորդ Մրցանակաբաշխութիւնը 1905ին:

ԲԱՌԵՐՈՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ՄԸ

ԲԱՐԲԱՌՅԻՆ ՆՈՒԱԳԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (L'INSTRUMENTATION VERBALE)

ՄԱՍԻՍԻ 17րդ քիւից մեջ՝ Տիկին Զապէլ Սալեան նաեւ մը տալու համար Ֆրանսա Գրական Դպրոցի մը (Instrumentation verbale) արտադրութեանց վրայ, ներկայացուցած էր այդ Դպրոցի պէտքին՝ Պ. Ռընէ Կիլի վերջին բանաստեղծական գործը, «Բանդունները»: Գրասէր ընթերցողներու կողմէ յայտնուած հետաքրքրութեան վրայ, որով կը փափագէին ծանօթանալ այդ գրական դպրոցին սկզբունքներուն, համակերպի գրագիտունին նամակով մը դիմած էր Ֆրանսացի բանաստեղծին որ հանդիպասարարութիւնը ունեցած է յաջկապէս ՄԱՍԻՍԻ համար յօդուած մը դրկելու. զոր քարգմանած է Տիկին Սալեան: Գրուածքը զուտ մասնագիտական է եւ քեզ ոչ — հասկնալի ամեն ընթերցողներու համար, բայց ասիկայ պատճառ մը չէ որ սիրով չհիւրընկալէինք գրուածքը Պ. Ռընէ Կիլի որուն հրապարակով կը յայտնենք մեր շնորհակալութիւնը ինչպէս նաեւ մեր աշխատակցունիին որ զուտ գրագէտ դասակարգին համար յանձն առած է այս աշխատութիւնը:

Պիտի յաղթեմ ուրեմն վարանումներու. հաղիւ թէ վարանումներ, քանի որ պիտի խօսիմ սիրելի և ներողամիտ միտքերուն այն Արևելքին ուրիշէն ինծի կը թուի թէ եկած է հոգիս: Քանի մը բառ պիտի ըսեմ լեզուին և ոտանաւորի երաժշտական տեսութիւններուն վրայ — զորս տրամաբանական և գեղեցիկ ներկատեցի և որոնց համեմատ չինեցի իմ իսկ երկերս ու կը ներկայացնեմ դանտեք՝ եթէ արժանի դատեն՝ ուրիշներու խորհրդածութեանց:

Աւելի պատշաճ պիտի ըլլար նախ քննել իմաստասիրական սկզբունքը. (բնաշրջական իմաստասիրութիւն մը): Բայց կը թուի թէ թանկագին հետաքրքրութիւններ անմիջապէս կուղեն հասկնալ բարբառային նուագարանականութիւնը: Աւելի ուշ՝ եթէ ուզուի՝ պիտի վերագրանամ իմաստասիրութեան: Միայն զիտելի է թէ այս յեղաշրջական իմաստասիրութիւնը կը վերցնէ բոլորովին հին կրիւր նիւթապաշտութեան և դադափարականութեան (Idéalisme) մէջ. որովհետեւ դանտեք կը միացնէ ցուցնելով թէ վերջինը կը բլիւի յաւիտենականապէս առաջինէն: Անիկա կ'ապացուցանէ դադափարականութիւն մը նոր, զիտական դադափարականութիւն՝ որ անգիտակցին մէջ մշտնջենաւորապէս

նիւթին յարակից է, և որ բնաշրջօրէն կ'անջատուի այդ նիւթէն դառնալով հետզհետէ ա'լ աւելի զիտակից, Լաւագոյնին համար:

Արտայայտելու համար բանաստեղծական երկը՝ մէկ և բազադրեալ (երկրկնեալ մը հատորներ) որ լայն դաշնակութիւնով մը (syphonie) պիտի բլիւէր այդ իմաստասիրութեան, անհրաժեշտ էր ունենալ բարբառային technique մը, նոյն բնութեամբ: Այսինքն բանաստեղծական լեզու մը, մաթեմատիքական շարժումով, ընդունալ անհունօրէն բազմազանելու չափը (rythme) դադափարին համաձայն, բնականաբար առանց այլայլելու ու եւ է կերպով սովորական լեզուն. բայց ի ֆրանսական լեզուն պարզական (simpliste) և աղքատ syntaxe:

Միայն գիտականօրէն կրնար հաստատուիլ այս նոր առաստանութիւնը (prosodie) և նաեւ վիստակելով վարիչ ուղղութիւնը բոլոր ցեղերու առանձին բարբառին, և հոս մասնաւորապէս ֆրանսերէն լեզուն: Հէլմօլցի երաժշտութեան մէջ դաշնակաւոր ձայներու արժէքին վրայ ըրած փորձերուն արդիւնքով ինծի ներելի եղաւ հիմնել բարբառային նուագարանականութեան տեսութիւնը: Ինչ որ անկէց ի վեր ընթացիկ եղաւ եւ 1892ին Պ.

Սիւլլի-Բրիւսոմ (մըանսական Ակադեմիէն) միանգամ ընդ միշտ զայն հաստատեց իր տանաւորներու արուեստին վրայ գրած գիրքին մէջ :

Արդ՝ զիտականօրէն ընդհանրապէս լեզուն երաժշտութիւն է . արդարեւ Հէլմօլց ապացուցուց որ նոյնն են դաշնակաւոր ձայները, նուագարաններու զանազան հնչիւնները և մարդկային ձայնին կամ ձայնաւորներուն հնչիւնները :

Ձայնաւորները պէտք է որ համեմատին երաժշտական հնչիւններու, — մարդկային ձայնին գործիքը ըլլալով ճշմարիտ լեզուակ (anche) մը փոփոխական նօթերով՝ ամբողջացած նաև փոփոխական հնչեցուցիչէ մը որուն տարրերը կը կազմեն քիմքը, չրթները, ակռաները, այտերը . ապացուցուց այդ համեմատութիւնները արհասանել տալով բոլոր ձայնաւորները տիարազօններու զանազան խումբերէ որ կը թրթռացնէր :

(Այս հիմերուն վրայ է որ յետոյ Պ. Յապէր խօսելու գործիք մը շինեց յառաջ բերելով ճիշդ ձայնին գործարանը որ ոչ միայն ձայնաւորները կ'արտասանէ, այլ նաեւ բաղաձայնները) :

Ուրեմն ամէն երաժշտական գործիք ունի իրեն յատուկ դաշնակութիւնները որոնց խմբուիլը կ'որոշէ զայն ուրիշներէն և կը կազմէ իրեն հնչիւնը (timbre) . ձայնն ալ բաղմապատիկ նուագարան մըն է՝ կազմուած զանազան ձայնաւորներէն . իւրաքանչիւր ձայնաւոր տարրեր նուագարան մըն է, տարրեր դաշնակութիւններու խումբէ մը կազմուած, տարրեր հնչիւններով :

Հէլմօլց ինծի կուտար ուրեմն ճշգորէն համամանութիւնը նոյն թուով դաշնակութիւններու որ կը համապատասխանէին իրարու՝ երաժշտական գործիքներու և ձայնաւորներու ու երկձայններու մէջ :

Բայց իւրաքանչիւր նուագարանին հնչիւնը կ'ունենայ իրեն յատուկ շնչիւններ և աղմուկներ և որ յառաջ կուգայ ձայնին արտայայտութեան մասնաւոր եղանակէն . գալարուող, կծու, թրթռացող, պայթող, կռնող և ճշող ձայները ուրեմն ասոնք են եւ նոյն յատկութիւններով, նոյն իսկ Բաղաձայնները

որ կ'ընկերանան և կը բարեփոխեն Ձայնաւորներու ձայները :

Մէկ խօսքով ուրեմն, լեզու մը երաժշտական արտայայտութիւն մըն է, բարբառային նուագարանականութիւն, . գիտականօրէն ապացուցուած :

Բայց պարզ դատողութիւնն իսկ կրնայ ի յայտ բերել այս ճշմարտութիւնը . զգայնութեան, արտայայտուիլ ուղող յուզմունքի, երեւան ելնել ուղող մտածումի մը ազդեցութեանը տակն է որ նախնականօրէն ծնաւ արտասանուած ձայնը, սկզբնական լեզուն : Այս լեզուն այսպէսով եղաւ իր ծագումին մէջ, երաժշտական ելեւէջներու շարունակութիւն մը . այսինքն զգայնութիւնը, յուզումը, դադափարը, անբաժանելիօրէն կապուած են հնչունութեան ձայնականութեան արժէքներու :

Ապահովաբար երաժշտութիւնը, ամենէն բազմազան եղանակն է արտայայտութեան : Սակայն եթէ անիկա կը նկարագրէ և կը թելադրէ, միւս կողմէ չկրնար սահմանել մտածումը, զայն նշանակել . բայց լեզուն հասկցուած, ինչպէս մենք կը հասկնանք երաժշտականապէս, մարդաբանական ճշմարիտ իմաստով և ճշմարիտ աւէն ցելի բարբառներու համար, կը ստանայ երաժշտութեան բոլոր յատկութիւնները և նաեւ զայն անհունապէս կը գերադանցէ, քանի որ կը նկարագրէ, կը թելադրէ և կը սահմանէ ճշգրտիւ յուզմունքին զգայութիւնը . . . Սրդ կը մնար կցորդել ընդհանուր առմամբ՝ թէ՛ երաժշտական և թէ՛ ձայնաւոր նուագարանները գաղափարին և գաղափարներու տեսակներուն—և իրենց վերադրել ընդհանուր և էական նշանակութիւն մը (քանի որ նախնական) ըլլայ հնչունութեան, ըլլայ ձայնականութեան տեսակէտով : —Հոս չեմ կրնար եղբակացութեանց հասնիլ, որոնք անհրաժեշտ եղան և կը պահանջեն բազմաթիւ համատեսական (synoptiques) ցուցակներ որոնք կը գտնուին իմ En Mèthode գիրքիս մէջ : Բայց օրինակ մը տանք . i, î, ie iè, iè ձայները որոնց դաշնակաւոր հնչիւնները ամենէն շատ են, կը համապատասխանեն ջուլթակին, թաւ—ջուլթակին, բամ-

րինն եւն . և զիտենք թէ նուագախումբի մէջ այս նուագարանները կը գործածուին էական նապէս ներկայացնելու ամենէն սուր զերազդայութիւնները բարձրացած ցաւին իսկ , սիրոյ , աղօթքի , տենջանքի մէջ եւն

Այս ինչ մտաւոր վիճակը բացատրելու համար միայն պէտք է որ զբաղուի զայն բացատրող բառերուն ճիշդ նշանակութեամբը , ինչ որ սովորական միակ հոգն է . այլ նաեւ այդ բառերը պէտք է ընտրուին իրրեւ հընչիւն , իրենց ձայնականութեան համեմատ , այնպէս որ իրենց կամաւոր և հաշուած խմբումը աննխախտական և իրր մաթէմատիք համարժէքը տայ նուագարաններուն զոր երաժիշտ մը պիտի գործածէր նման պարագայի մը՝ բացատրելու համար նոյն մտաւոր վիճակը : Եւ ինչպէս որ արտայայտելու համար միամիտ պարզ և դողտր հոգեկան վիճակ մը՝ անտարակոյս երամիշտ մը չպիտի գործածէր փողը և թմբուկը , նուագարանական բանաստեղծը նոյն պատճառով պիտի զգուշանայ գործածելէ այն բառերը որ բեռնաւորուած են o , a ձայնաւորներով և r , p , t , gh բաղաձայններով . . .

Այս ձայնական շեշտերու շարքը սերտիւ կապուած մտածումի զանազան եղանակներուն՝ փոփոխելի կը դառնայ անհունապէս բառերու տեղաւորումէն՝ արտադրելով ներդաշնակութիւնն եր կամ աններդաշնակութիւններ : Ասոնցմէ է որ մաթեմատիքական ճշգրտեմամբ ստեղծուած է Չափին (Rythme) անսահման զանազանութիւնը : Օրինակի համար այն բառերը որ իրենց մէջ խնշուած ունին i , a , և , ou , ձայները , իրենց յաջորդական ուստուններով պիտի նկարագրէին խրուովուած և փոփոխելի կոհակները — ըստ շարունակական չափին , երանդուած և հրաշքոտ ամենազօր ուղղիչ Մտածումէն վարուած որ ուղղակի կ'արտայայտուի նախնական և ձայնային արժէքով , հնչիւններուն աւելով իրենց բարձրութիւնը և յուզմունքի ուժգնութիւնը . . .

— Աւելի արագութեամբ ըսենք հիմա որ ընդհանուր չափը որուն պէտք է հպատակին այս ձայնական անհամար ելեւէջները , alex-

andrin ոտանաւորն է 12 վանկով — բայց աւանց իրեն կամածին հատուածներուն , այլ այլափոխ գաղափարին իսկ չափէն՝ ընթանալով դէպ ի երաժշտականօրէն բարբառային չափերուն . . . Յանգերը այլ եւս ունայն զարդ մը չեն , — հաղիւ թէ փայփայանք մը — , այլ նաեւ կ'ամբողջացնեն ընդհանուր գաղափարը և նոյն իսկ մտածումը :

Կանոնաւոր տունները (strophe) այլ եւս չեն գործածուիր — և ասիկա պարզ բան մըն է , քանի որ գաղափարը կը յեղաշրջուի չկրնար փակուիլ սրարբերական դարձերու և յանգերու մէջ , այլ մտածումը ինքն իսկ իրեն յատուկ չափովը կորոչէ տունները , այսինքն յանգերը և դադարները :

Արդ բանաստեղծութիւնը այլ եւս ճշմարիտ նուագարանականութիւն մըն է . անիկա կ'ընարէ և յառաջ կը բերէ ուղղիչ գաղափարին կարեւորութեանը համեմատ իր զըխաւոր motif (leif—motif) և երկրորդական motifները . . . ինչպէս նուագայարդարը՝ բանաստեղծը կը յարգարէ որովհետեւ բանաստեղծը բառերու երաժիշտ մըն է իր ներքնաչումներուն և մտածումին ամենահզօր ազդեցութեան ներքեւ :

Բանաստեղծութիւնը մէկ է , բայց գիրքն ալ մէկ է՝ բաղադրեալ ձայնական ու ճարտարակոտական կազմուածքով մը . երկն ալ պէտք է մէկ ըլլայ և բաղադրեալ — ինչպէս ուղեցի իմ երկին համար , որ կեանքիս չափ երկայն պիտի ըլլայ ուղած ըլլալուս համար իր մէջ համադրել մարդկութեան յաւիտենական Ջանքը դէպ ի յառաջիկա մութիւն , իր աւելի վստահ զիտակցութիւնը :

— Պիտի ամբողջացնեմ , մէկ խօսքով բարբառային նուագարանականութիւնը որ հարկ եղաւ այնքան համառօտիւ ցուցադրել : Եթէ սխալած չեմ , ասիկա կը նշանակէ և կը ներկայացնէ ֆրանսական լեզուին ամենէն բազմադիմի նրբութիւնները զոր դրական լեզու մը կը ստանայ ըլլալով աննխախտական նուագախումբ մը մտածումին չափական ազդեցութեանը ներքեւ . խօսքը այլ եւս պայմանադրական նշաններու շարք մը չէ , մոռցած իր

ձայնական ծագումը, այլ դաշնակութիւն մըն է և բանաստեղծութիւնը մինակ այս ձեւով կրնայ զայն հասկնալ:

Նաև ամէն լեզուներու համար այս տեսութիւնը արժէք ունի. որովհետեւ բարբառային նուագարանականութիւնը (Instrumentation verbale) հաստատումն է իրենց միակ ձայնական ծագումին և իրենց ձայնականութեանը մէջ կայ իրենց նշանակիչ ուղղութիւնը ամենէն մաքուր, ամէնէն յարմար զգայնութեան և մտածումին: Ուրեմն անիկա բնականաբար կը դառնայ—որպէսզի բանաստեղծութիւնը ապրի աշխարհի մէջ—բանաստեղծութեան լեզուն այլ ևս գիտակից, խորհրդածուած և անաչառ:

Թարգմ. Զ. Ս.

ՌԸՆԷ ԿԻԼ

ԳԼԽՈՒՍ ԵԿԱԾՆԵՐԷՆ

ՄԵՐ ՊԱՐԳԵՒԷ

Մինչեւ մեռնելս չպիտի մոռնամ...

Այդ դեկտեմբերի մէկը՝ երթայ երթայ չի գայ:

Կեանքիս մէջ ահադին, շատ մեծ, անընկարագրելի յուզումներ ունեցած եմ, բայց այդ օրուանին նման երբեք:

Պզտիկ յուզում չէր, կ'երեւակայէք, ծընած օրուանս սիրտխաղը, առաջինը:

Ինը ամիս շարունակ, անթափանց խաւարներու մէջ միս մինակ, ես ինծի ծրագրիներ չիմած էի, կարգադրութիւններ ըրած և հաշիւներ բռնած:

Իմ հաշուովս և ըստ փափաղանայս՝ աղջիկ պիտի դայի աշխարհք: Իմ գործիս ատանկ կու դար:

Ես ինծի բլան մը չիմած էի կանխաւ: Ամէն բանէ առաջ աղուոր աղջիկ պիտի ըլլայի, շատ սղուոր, խելացի, զգայնոտ, չիք, աղմուկ հանող աղջիկ մը, abracadabrante մէկ ուղածս երկուք չըլլար, հիացում, սքանչացում սիւնէի շուրջս, ամէնուն պաշտած կուռքը ըլլայի և ամէնուն գգուած խոտէլը,

տեսակ մը Բօնբատուր, Ռէքամիէ, Տրակա:

Այդ հավեսով գլուխս դուրս կը հանեմ գէպ ի լոյս աշխարհ և դեռ կէսս հոն ու կէսս հոս, ահա դայեակը, Ամերիկայի հողը հեռուն տեսնող նաւագներու յափշտակութեամբ, մեծ գործ մը տեսածի պէս, գլուխը վեր կ'առնէ և կը պոռայ՝

—Մանչ է, աչքերնի՛դ լոյս:

Ամբողջ ծրագրիներս ջուրը ինկած էին Բէռլինի կաթնամանին նման և հակառակ կամքիս, առանց ինծի հարցուելու, մանչ եւ կած էի աշխարհի մը մէջ ուր աղջիկ ըլլալը խելացութիւն է:

Այնքան սիրտս խաղաց որ, յուզմունքես երեք օր երեք գիշեր աչքերս չի բացի և պատառ մը բան չի կրցի դնել բերանս:

Առաջին, մեծ յուզմունքս էր այս: Ծայրը չպիտի դար եթէ ուղէի պատմել ձեզի այն ամէն յուզմունքները որոնք ասոր յաջորդած են և չիմած են այն անուշ-լեզի կեանքը դուր կ'ապրիմ:

Բայց այս ամէնը նշանակութիւն չունի այն դերադրապէս հզօր, աներեւկայելիօրէն սարսափացնող յուզմունքին քով՝ որ ինձ տըրուեցաւ զգալ 1894 դեկտեմբեր մէկին ըստ Փրանկաց:

Ռումէլիի երկաթուղին, վեց հաւիւր հաղաւ ֆրանք...:

Երկու միլիոն հոգի հոգեսպառ կերպով այդ մեծ պարգեւին ետեւէն կը վազեն: Անոնցմէ մէկն ալ ես եմ, ամօթ է:

Ինծի այնպէս կը թուի թէ այդ մեծ պարգեւը մէկ անգամէն վաստակիլը աւելի խելացութիւն է քան պաշտօնեայ ըլլալը Ռէժիի մէջ և կամ վարժապետ... Ս. Նաչի վարժարանը:

Որովհետեւ force majeure մը արգելած էր զիս աղջիկ ծնելէ, գոնէ, կ'ըսէի. սա 600,000 ֆրանքը վաստակիմ՝ նոյն իսկ 42 դեղշով, հոգ չէ:

Եւ այս փափաքիս իրականութիւն մը տալու համար, վաստկած դրամս քօմիսի կը պառկեցնէի սա համոզմամբ թէ բազմապառկողներուն կը ժպտի:

Եւ այսպէսով տարիները կ'անցնէին:

Անգամ մը, 1894ին, չեմ գիտեր ի՞նչ փը-
չեց խելքիս, 100 հատ բրովքսը մէկտեղ դը-
նեցի:

Այս անգամ մեծ պարգևեր չէր կրնար
փախչիլ: Հարիւր հաւոր կատակ չէ:

Դեկտեմբերի մէկն է:

Ի՞նչ աղուոր կաղանդ պիտի ընէի, հէ՞:

Այդ օրը գաղափար մը կը ծնի գլխուս
մէջ: Որովհետեւ բազմը ինծի չէր գար, ու
բողեցի ես իր ոտքին երթալ և en route դէպի
Զարիհանէն ուր կը քաշէին այդ վիճակահա-
նութիւնը:

Գալիք հարստութեանս վրայ վստահ,
կառք մը կը կեցնեմ կամուրջին գլուխը: Այն
միջոցին որ մէջը պիտի տեղաւորուիմ, ծե-
րուկ աղգական մը աչքիս կը զարնէ.

—Գրիգոր աղա, հետս կուգաս,

—Ո՛ւր:

—Զարիհանէն:

—Ես ալ միտք ունէի երթալու, միատեղ
երթանք:

Կ'առնեմ քովիկս և քսան վայրկեանէն
կը հասնինք ու կը մոնենք այն ամիսիթատ-
րոնի՝ ձեռով շինուած սրահը ուր Բաղդը իր
պատգամը պիտի տայ:

Ահագին բազմութիւն խռնուած է, բոլոր
յուսահատները:

Իրարանցում մը, տակնուվրայութիւն մը
որ այսքան կ'ըլլայ: Զիրար կը հրմշտկեն,
արմուկի հարուածներ կուտան, կը սրտան,
կը կանչեն, կը հայոյն և կը սպառնան:
Խուլցնող վժիտուկ մը զոր կարելի չէ նկա-
րագրիլ:

Տառը վայրկեանէն պիտի քաշուի:

Ամէնուն ձեռքը թուղթի կտորներ, մա-
տիտ:

Ես մոռցած էի բրովքներու թիւերը զատ
թղթի կտորի մը վրայ նշանակել, հետեւա-
բար կէսը Գրիգոր աղայիս կը յանձնեմ որ
նայի: Հարիւրը մէկանց չէի կրնար contrôleի
տակ առնել:

—Գուզում Գրիգոր աղա, տխրոյն չա-
յիս, հա՞:

—Ելլայն է ինծի ի՞նչ կայ:

—Դուն ա'չքս նայէ:

Վիճակահանութեան օրինաւորութեանը
հսկող պաշտօնեաները պզտիկ դռնէ մը կը
մոնեն ներս և իրենց յատուկ աթոռներուն
վրայ կը բազմին:

Խոշոր եօթը անիւներ իրենց առանցքին
վրայ կը սկսին դառնալ:

Վճռական ժամին մէկ վայրկեան կայ:

Աղմուկը կը դադրի, խաղաղութիւնը կը
տիրէ:

Եղածը խաղալիք չէ: Կը քաշուի կոր:

Ամէնուն դէմքին վրայ լրջութիւն մը,
սոսկում պատճառող լրջութիւն մը:

Դէմքերու գոյները կը փոխուին, աչքերը
տարբեր նայուածքներ կ'առնեն, ճակատնե-
րէն քրտինք կը հոսէ, սիրտերը կը տրոխն,
միտքերը կ'ամբիոփուին, և երեւակայութիւն-
ները կը խանգարին:

Տեսարանը հանդիսական է և անարեկիչ:

—Գրիգոր՝ աղա, ոտքդ պաղնեմ տխրաք
ըրէ:

—Գործս ի՞նչ է:

Պզտիկ տղայ մը կ'ելլէ բեմին վրայ և
մահուան սարսուռին պէս բան մը կը արէ
սրահին միջնուորտին մէջ:

Գրիգոր աղային փակած, սիրտս թիք
թաք կը զարնէ:

Այդ վայրկեանին դաշոյնի հարուած մը՝
երակներէս կաթիլ մը արիւն դուրս չպիտի
կրնար հանել:

Սրահը հոգեվարքի մէջ է կարծես: Ծան-
ճի մը թռիչք պիտի լսուէր:

Յիսուն հատ բրովքները ձեռքիս մէջ,
ամբողջ նկանջ կը կտրիմ:

Շունչ առնելու ճար չի կայ, այնքան սեղ-
մուած ենք:

Զանգակ մը և տղան ձեռքը կը խօթէ
անիւին մէջ:

Հոգիս պիտի ճաթէր:

Մէկ կը սրտան յանկարծ:

Յիսուն թիւերս նայելու հազիւ ժամանակ
կ'ոռնենամ և կը կարդան երկրորդ թիւը.

Հիմք:

Մէկ միլիոն հինգ հարիւր հազար...

Հատ մը ունիմ ասկէ, նա՛:

Ինք:

Մէկ միլիոն հինգ հարիւր ինըսուն հա-
զար...

Թուղթերս նորէն կը նայիմ: Կարծեմ ու-
նիմ ատանկ թիւ մը:

— Գիրգոր աղա, ընտո՞ր կ'երթաս կոր:

— Երկու հաս կայ, սուս եղիր:

Երեք:

Մէկ միլիոն հինգ հարիւր ինըսուն երեք
հազար...:

Աչքիս զարկաւ կարծեմ ատանկ թիւ մը:

Գիրգոր աղան բաներ մը կ'ըլլայ կոր:

Վեց

Բայց առաջին տեսածս կը փնտռեմ, չի
կայ: Նորէն կը վերսկսիմ:

Մէկ միլիոն հինգ հարիւր ինըսուն երեք
հազար վեց հարիւր...:

— Սման Աստուած, ձայն մի՛ հաներ, կը
մոլտայ Գիրգոր աղան:

Պիտի խնդհնամ:

Ես ալ ատանկ թիւ մը ունէի, ո՞ւր մնաց,
կը փնտռեմ թուղթերուս մէջ:

Մեկ

Մէկ միլիոն հինգ հարիւր ինըսուն երեք
հազար վեց հարիւր տասն...:

Աչքերս կը մթազնին, ա՛լ չեմ տեսնար
կոր: Ինքզինքէս ելած եմ:

Ամբողջ բրոմէսներս տակն ու վրայ եղան,
իրար խառնուեցան, կրնաս նէ գտիր:

Չորս

Գիրգոր աղան սոսկալի ճիչ մը կը հանէ
և վրաս կ'իյնայ:

Խեղճս գլխէս գնաց. պաղ պաղ քրտինք-
ներ սկսան կաթկթիլ ճակտէս:

Թուղթերը ինկան ձեռքէս, պիտի մարէի:

Չարկա՛ւ, ըսելիք չի կար:

— Գիրգոր աղա, ինքզինքիդ եկուր, ի՛նչ
եղար,

— չի պէ, նասրբիս վրայ մէյ մը կոխեցին
քի:

.

ԵՐԻՉԱՆԹԷՍ

Պէրպէրեան Վարժարանի ամսվերջի հրա-
պարակային քննութիւնները սկսան յունիս
23ին և պիտի տեսնեն մինչեւ յուլիս 3:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՆՈՐ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԸ

Զատիկի շաբթուն մեր գրած յօդուածին
մէջ, ինչպէս կը յիշեն անշուշտ Մասիսի ըն-
թերցողները, կ'ըսէինք թէ Երուսաղէմի Միա-
բանութեան անդամոց վաղածանօթ իմաս-
տութիւնը և խոհեմութիւնը ամէն յոյս կը
ներշնչէ որ շատ շուտով վերջ պիտի տան ի-
րենց մէջ երեւան ելած դժտութեան և կու-
սակցական պայքարներուն:

Այժմ ուրախ ենք յայտնելու թէ ահա մեր
տեսութիւնը, որ հիմնուած էր իրենց մասին
ունեցած մեր փորձառական գիտակցութեանը
վրայ, լիուլի ճշդուեցաւ, զի բաւական ատե-
նէ ի վեր Երուսաղէմէն համոզող պաշտօնական
և անպաշտօն բոլոր գրութիւնները և լրագ-
րական թղթակցութիւնները՝ ի մեծ գոհու-
թիւն բոլոր հասարակութեան՝ իմացուցած են
արդէն թէ ըստ ամենայնի վերջ գտած են
ամէն հակառակութիւնները և վերահաստատ-
ուած է համերաշխութիւնը:

Այս գոհացուցիչ կացութեան ամէնէն աւե-
լի բացորոշ յայտարար նշանը Երուսաղէմի
նոր Լուսարարապետին ընտրութեան պարագան
է, որմէ աւելի պերճախօս ապացոյց չէր կըր-
նար ըլլալ Ս. Յակոբեանց Միաբանութեան
մէջ կուսակցութեան կրքերուն մարած ու սէր
և խաղաղութեան վերահաստատուած ըլլա-
լուն: Որովհետեւ նոր Լուսարարապետ Տ.
Վահրամ վարդապետ Աղարեանի անձին վրայ
կատարուած ընտրութիւնը կը հաստատէ այդ
պարագան շատ յստակ ու պայծառ կերպով,
քանի որ յայտնի է թէ կատարեալ համաձայ-
նութեամբ տեղի ունեցած է այդ ընտրու-
թիւնը, առանց կուսակցական նկատումներու
որոնց բնաւ ենթակայ չէ եղած իր անձը, հե-
ռու ըլլալով Երուսաղէմէն տասը տարիէ աւելի
և բնակելով Աղեքսանդրիա իբրեւ տեսուչ
Նգիպատոսի Երուսաղէմապատկան կալուածնե-
րուն, զորս մատակարարել գիտցեր է գնա-
հատելի գործունէութեամբ եւ արթուն տըն-
տեսութեամբ:

Տ. Վահրամ վարդապետ Աղարեանէ տար-
բեր ոչ ոք այնքան յարմար էր Լուսարարա-

պետութեան պաշտօնին, որուն կարեւորութիւնը աստիճան մ'աւելի զգալի դարձած է այս միջոցները, անոր համար որ վերջերս այդ պաշտօնին շուրջ այնքա՛ն խնդիրներու պայքարներ բորբոքեցան, և զօգուած կիրքեր պայթեցան, իրենց տխրանքիւն արձագանգով հանրութեան ցաւ ու վիշտ պատճառելով:

Ուստի Անդլեան հանգուցեալ վարդապետին տեղ պէտք էր ընտրել այնպիսի անձ մը որ թէ՛ կատարելապէս չէզոք ըլլար և թէ՛ պաշտօնին պահանջած յատկութիւնները միանգամայն ունենար: Արդ, Տ. Վահրամ վարդապետ այդ երկու հանգամանքներն ալ կը միացնէ իր անձին վրայ. իբրեւ չէզոք՝ իմ պաշտօնավարութիւնը խաղաղութեան և համերաշխութեան նշանակ կրնայ ըլլալ. իսկ իր նախկին պաշտօններուն մէջ ցուցուցած կարողութեամբ և գործունէութեամբն ալ իր արժանաւորութեան մասին տարակոյս չթողուր: Նորընտիր Լուսարարապետը Եգիպտոսի երուսաղէմապատկան կալուածներու տեսչութիւնը չէ միայն որ վարած է, այլ անկէ աւելի կարեւոր պաշտօն մը, այն է Երուսաղէմի վանքին աւագ-թարգմանի պաշտօնը, այն ալ երկար տարիներ: Եւ նոր բան մը ըսած չենք ըլլար—զի արդէն շատ ծանօթ է—թէ աւագ-թարգմանութիւնը Երուսաղէմի համար կարեւորութեան կարգաւ երրորդ պաշտօնն է, երկրորդն ըլլալով Լուսարարապետութիւնը, առաջինը՝ Պատրիարքութիւնը, ինչպէս բնական է հետեւեցնել:

Աւագ թարգմանութիւնն ալ կը պահանջէ իրր առաջին պայման միաբանութեան անդամները սիրաշահիլ և համերաշխութեամբ վարել, պայման մը՝ որ գերազանցապէս պահանջելի է Լուսարարապետութեան պաշտօն վարողէն ալ: Արդ, այն որ իբր աւագ-թարգման ցուցիւն է թէ այդ ձիրքն ու յատկութիւնը ունի, մեծ վստահութիւն կը ներշնչէ թէ աւելի ևս Լուսարարապետութեան բարձր պաշտօնին մէջ ի հանդէս պիտի հանէ նոյն ձիրքն ու յատկութիւնը:

Ասոր համար խիստ ուրախ ենք ևս կը շնորհաւորենք Ս. Յակոբեանց Միաբանութիւնը այս յաջող ընտրութեանը համար: Կը շնորհաւորենք նաև նորընտիր Լուսարարապետ

Տ. Վահրամ վարդապետ Աղարեանը, և կը մաղթենք իրեն կար ևս կարողութիւն: Այն հաւատքն ունինք թէ իր պաշտօնավարութիւնը արժանաւոր յաջորդութիւնը պիտի ըլլայ Ամեն, Խաղայեան Սրբազանի Լուսարարապետութեան որուն ինչ բարձր աստիճանի մը յանգիլը ահա մէջտեղն է:

Մ. ՆԱԹԱՆԱԵԱՆ

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՕՐԱԳՐԵՆ ՔԱՂՈՒԱԾ

(ՆՈՐԱՎԷՊ)

ՅԵՔԵԱՔՔԻ

Գործիդ եկաւ, չարածձի՛: Ե՛ս ալ գիտեմ օրագիրները յափշտակութեամբ կարդալը: Իմ մասիս, օրագիր մը գրելը ամէնէն դիւրին ու միեւնոյն ատեն ամէնէն դժուարին բանն է: Կը մտածես, կը խորհիս որ չելլես պղտիկ բառ մը, անճա՛հ պարբերութիւն մը փախցունես բերնէդ, չելլես քու անձիդ նկատմամբ գէշ գաղափար մը արտայայտես:

Սիրանոյշս ա՛լ առջի աղջիկը չէ, փոխուած է բոլորովին:

Մարդ մէկ երկու ամսուան մէջ այսքան կը փոխուի եղեր: Սրտեղութիւն մը, դիւրաւ առնուելու տրամադրութիւն մը, սարսափելի անհամբերութիւն մը կայ վրաս: Բոլոր ասոնց պատճառը չեմ ուզեր ըսել, որովհետեւ գիտես արդէն, միայն պիտի խնդրեմ որ որչափ կարելի է չ'ուտ վերադառնաս:

Նղբօրս նամակը ստացա՛ր արդեօք:

ՉՅԵՔԵԱՔՔԻ

Դրկած պըրլո՛դ սքանչելի էր: Ուրկէ՞ ալ մտածեր ես ատանկ նախադասութիւն մը գրել տալ անոր վրայ. հաւատա՛, շատ սիրուն էր, ո՛րչափ կրկնեմ, այնքան աղւուր կ'երեւայ ան աչքիս:

J'aime

Qu'on m'aime

Comme j'aime

Quand j'aime

Ուրախութիւնս չեմ կրնար բացատրել: Ծա՛տ շնորհակալ եմ, սիրելի բարեկամուհիս:

Ամէն վայրկեան քու կեանքիդ կը հետեւ-
իմ: Սա պահուն գիրք կը կարդայ, կ'ըսեմ,
ժամը իննին յարգարանք կ'ընէ, այս ինչ
վայրկեանին պատահան է: Ձեռ գիտեր,
որքան կը սիրեմ զքեզ:

Շիրտակը կը վարմանամ նորէն այսքան
համբերելուս վրայ, ես որ առանց քու դէմ-
քդ տեսնելու չէի կրնար նոյն իսկ օր մը
անցընել, ես որ առանց քեզի ապրիլը յուս-
սահատութիւններուն ամէնէն մեծը կը նկա-
տէի:

Հինգեաբբի

Միտքս դրի որ վաղը Արաքսիս երթամ:
Շաբաթ մը կ'ընէ որ չեմ տեսեր զինքը: Ի-
րեն յոյց տալիք նոր յօդուածներս, պատմե-
լիքներս, պատուէրներս ամէնքը հաւաքեցի
ու միտքիս մէկ անկիւնը զետեղեցի՝ բան մը
չի մտնալու զիտաւորութեամբ: Մինչեւ ի-
րիկուն ուրախութեամբ և անհամբերութեամբ
անցուցի, վաղուան հաճոյքներուն սպասելով:

Ուրբաթ

Ինչե՛ր միտքս դրած էի, ինչե՛ր կուգէի
ընել Աստուած իմ, և ի՛նչ եկաւ գլխուս:

Այսօրուան տանջանքս պիտի չկրնամ մոռ-
նալ:

Խենթեանալս բան մը չէր: Տարօրինակ...
ճամբորդութիւն մը ունեցայ այսօր: Դրա-
ցուհիներէս Օրիորդ Գլարա, (որուն հետ ու-
նեցած... քարեկամութիւնս բաւականէն ա-
ւելի լախցաւ այսօր) այսպէս, դրացուհիներ-
էս Օրիորդ Գլարա զիս հրաւիրեց, իրենց
ընտանիքով Պէսէքի սլարտէզը երթալու հա-
մար: Ինչ պատրուակ որ մէջտեղ դրի, ինչ որ
ըսի չի կրցայ օձիքս ձեռքէն ազատել. վեր-
ջապէս չուղելով մօրս սիրտը վշտացնել՝ ա-
կամայ ընկերացայ անոնց:

Այս, Աստուած իմ, մարդ իր սիրածին
հետ ճանճրանայ, ժամերով ճանճրանայ,
քան ասանկ հաճոյք մը վայելէ: Ո՛չ ծովը իր
հմայքները կը սլարտէր աչքիս, ոչ նաւուն
հաճոյքները, ո՛չ աս, ո՛չ անկը զգայի. ընդհա-
կառակը տրտմութիւն մը կար որ ամբողջ
հոգիս սեւ մառախուղով մը պարուրած էր:

Իրիկուան, երբ լուսինով տուն կը վերա-
դառնայի, կը զգայի որ կէսս... վրայ տուած
էի, փոխանակ չահելու:

Անգամ մը չեմ սիրած այդ Օրիորդ Գլա-
րան, ա՛յսչափ:

Շաբաթ

Բեզի բան մը սլաւմեմ, մտիկ ըրէ՛, սի-
րելի Ջարուհիս:

Մեր թաղին վարժուհին երէկ իրիկուն
մեզի եկաւ: Մէկ քանի չաղակրատութիւն-
ներէ ետքը, սա հարցումը ըրաւ ինծի.

— Դրչի կին ըլլալ կ'ուզեմ, ի՛նչ տեսակ
յօդուածներով կրնամ համբաւ չահիլ:

Խնդալս չի կրցայ զսպել: Բայց քաղաքա-
վարութիւնը չի կորսնցնելով.

— Դրէ՛, ըսի, ինչ որ կ'ուզես, նախ դըպ-
րոցականի հին շարագրութիւններդ, Եզոքո-
սական առակներդ հրատարակէ, ետքէն,
երբ անոնք հատնին սպառն, գրագիտուհիի
մը կեանքը ուսումնասիրել սկսէ, կը նայիս
որ մէկ քանի շաբաթէն զրչի կին մը եղած
ես...

Խնդալով կ'ըսէի այս ամէնը: Ինքզինքս
ընաւ չեմ կրցած զսպել կեանքիս մէջ:

Ի՛նչ միամիտներ կան, ի՛նչ ինքնասէրներ:
Գրագիտուհի ըլլալ կ'ուզեն, և համբաւ
չահելու գաղտնիքը ասոր անոր կը հարցու-
նեն:

Ուրիշ մը գրգռելու համար, վաղը ամէ-
նէն անմիտ, ամէնէն պայմանադրական բա-
ները պիտի հրատարակեն, ըսիկ չի տալու
համար թէ իրենք միտքով ամուլ են:

Բայց եթէ չիտակը կ'ուզես, խոստովա-
նիմ որ պիտի յաջողի այդ վարժուհին, քանի
որ անցեալներ ու ներկաներ ունի և հին
շարագրութիւններու ալ ահագին քանակու-
թիւն մը: Խօսքը մէջերնիս սակայն, սիրելի
Ջարուհիս... ուրիշներուն չի հաւնիլը աղէկ
բան մը չէ:

Կիրակի

Տարօրինակութիւններու մէջ է որ կ'սպ-
րինք հիմա: Օրը նոր՝ ծիծաղելիութիւնը նոր:
Այսօր կը տեսնես որ կարգ մը մարդիկ չէն-
քով շնորհքով երիտասարդական վառվռուն
չըջանին անցընելէ վերջը, իրենց... քառա-
սուն տարեկանին կը սկսին բանաստեղծու-
թիւն ընելու. վաղը, թերթի մը մէջ, ծայ-
րայեղօրէն աննշան դասատուի մը մէկ համ-
բակ աշակերտուհին ծանօթ դաւնակախա-

բունի անուանուիլը կը կարգաս յանկարծ, բան մը որ հասարակութիւնը զայրացնելէ զատ, կը զարմացնէ ալ. ի՞նչ, այդքան դիւրին է եղեր դաշնակահարուհի ըլլալը. երեք... կը հասկնամ, երեք տարուան աշխատութենէ մը ետքը ծանօթ դաշնակահարի տիրոջոր առնել... իրաւ որ ապշեցուցիչ է: Եթէ օր մը այդ օրիորդը տեսնելու բարեբաղդութիւնը ունենամ, առաջին անգամուն պիտի խնդրեմ իրմէ որպէս զի այդ տարօրինակ յաջողութեան զաղտնիքը ինծի ալ սովորեցնէ, այս աշխարհին վրայ բան մը ա՛ղիտացած չըլլալու համար:

Ի՞նչ կ'ըսես դուն ասոր:

Երկուեաբքի

Թուրթոյի մէկ գիրքը սկսայ կարդալ. կը դժեմ հաւնած պարբերութիւններս, որպէսզի ետքէն երբ դուն ալ կարդաս և քու կարգիդ հաւնածներդ նշանագրես, տեսնենք թէ միեւնոյն զաղախարները, միեւնոյն զգացումներն են որ մեզի հաճելի թուած են այդ գիրքին մէջ:

Իրիկուան Արաքսին մեղի եկաւ: Գլուխ գլխի տաք խօսակցութեան մը բռնուեցանք: Ամէն տեսնելուս կը կարծեմ որ նոր կը տեսնեմ, կամ քանի մը ամիսներ կ'ընէ որ չեմ տեսած զինքը: Իմ հիւանդութենէս բռնուելէ, դիւրաւ կ'առնուի: Խեղքը միտքը քու վրայէ է:

Այսօր խոստովանութիւն մը ըրաւ Արաքսին, բան մը զոր պիտի չկրնամ այս անգամ քեզի գրել: Կ'ուզեմ որ անձամբ պատմեմ. սիրադ թող չի հատնի թէ ի՞նչ կայ — պարզ բան մը:

Մեկնած պահուն, — գիտես որ բնաւորութիւնով քիչ մը չար եմ, բարեկամութիւններուս մէջ իսկ, — ըսի Արաքսին որ Բաժնուած սիբսե վերնագրով ոտանաւոր մը գրէ, ճիշտ տեղն է...

Չտանուեցաւ կատակէս. ընդհակառակը. ես դառնալով ըսաւ ուրախութեամբ,

— Բայց կը տեսնես քանի մը օրէն, բաժնուած թէ անբաժան:

Իրաւունք չունէի կարծեմ այդ կատակը ընելու, անանկ չէ՞ Ջարուհիս: Արաքսին քովս չէ հիմա, սա վարկեանիս, բայց կը մտածեմ

թէ սիրոյ մէջ կատակը ամէնէն կատակածելի, ամէնէն տխուր տպաւորութիւնն է որ կը թողու մարդուս վրայ միշտ:

Չզջացի... ա՛խ, ի՞նչ չար եմ...

ՄԱՌԻ ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

Հ. ԳԱՐՔԻԷՆ ԱՐԴ. ՄԵՆԵՎԻՇԵԱՆ

Վիէննական Միթարեանց այս աշխոյժ և հմուտ միաբանին անունը, տարուան այս եղանակին, մասնաւոր այժմէութիւն մը կը ստանայ ուսումնասէր շրջանակներուն մէջ, Բանկալթիի վարժարանին ամսվերջի հանդէսին առթիւ զոր կը կազմակերպէ՝ իրեւ տեսուչը նոյն հաստատութեան: Որչափ ալ Վանքի մը ու Միաբանութեան մը պատկանող՝ այդ վարժարանը կեդրոնացած է, տարիներէ ի վեր, Հ. Մէնէվիշեանի անձին շուրջը որ այդ կըրթական անխիւն առանցքն է, կրնանք ըսել:

Կ'օգտուիմ այս այժմէութենէն, իր ուրուագիծը ներկայացնելու համար Մասիսի հաւաքնակ ընթերցողներուն որոնք անունով միայն կը ճանչնան զինքը, վասնզի Պոլսոյ մէջ հանրածանօթ դէմք մըն է արդէն:

Աշխատութիւնը, մտաւոր ու մարմնական, չի գիրնալու միակ միջոցն է, կ'ըսեն: Հ. Մէնէվիշեան այս բժշկական սկզբունքին հաւատակը կ'ապացուցանէ, կամ բացառութիւն մը կը կազմէ, վասն զի իր գիշեր-ցորեկ յոգնաջան աշխատութիւնները զինքը նիհարցնելու տեղ՝ գիրուկ ու մարմնեղ կը դարձնեն օր օրի:

Հասակը թէեւ չըլլայ սլարթ և, բայց սլարթեւ հասակի մը արժանի փառաւոր մօրուօք՝ աւելի չէլ քան խարսեալ, վառվռուն նայուածքով, արագ շարժուածքով, ժրջանութեան մարմնաւորումն է՝ լատին քահանայի լայնեղր գլխարկի մը տակ հովանաւորուած այս Հայ Հռոմէական վարդապետը:

Իր վարած վարժարանին մէջ, — որուն ուս-

ման մակարդակը ու գործնական կրթութեան աստիճանը հետզհետեւ բարձրացնել կը ճգնի, — պարզ տեսուչէ մը շա՛տ աւելին է, ուսուցիչ, հսկող, վարիչ, մարդող, ամէն բան վերջապէս: Իր սաները իրմէ կը պատկառին՝ ինչպէս հօրմէ մը, ու զինքը կը սիրեն՝ ընկերոջ մը պէս, վասն զի զիտէ գաղտնիքը սաստելուն ու յորդորելուն, մարդելուն ու ներշնչելուն միանգամայն: Աշակերտներուն հետ կը խօսի գերմաներէն ու ֆրանսերէն, և նոյն ձեռքն հասութեամբ որով հայկաբանութեան դաս կու տայ անոնց՝ կը հսկէ նաև մարմնամարզի փորձերուն:

Գլորացական շրջանակէն դուրս՝ իր լեզուաբանական ու բանասիրական երկարացունչ աշխատութիւնները ծանօթ են, թէ՛ Հանգէս Ամսօրեայի մէջ և թէ՛ առանձին հատորներով: Իր վերջին երկու գործերը, Գիւրգիւրեւ առուեսը և Լեզուագիտութիւնը, լայն շուկայ մը ու երկար դադար մը առնել պիտի տային ուրիշ որեւէ գրական մարդու: Հ. Մէնէվիչեան, մէկ երկասիրութեան վերջալէտը հաղիւ զԵրած, նորի մը պատրաստութեան կը ձեռնարկէ:

Իր առողջ միտքը ու կայտառ կազմուածքը բնականէն հակամէտ ըրած են զինքը վիճաբանող մը, մաքառող մը ըլլալու, գրչով ու խօսքով, որ դիւրաւ տեղի տալ չգիտեր. և եթէ երբեմն կընդհատէ լեզուապայքար մը, օրինակի համար, առժամայ դադար մը տալով գրչին, ո՛չ թէ տկարանալուն համար է՝ այլ յիշելուն համար թէ ինքը Միաբանութեան մը կը պատկանի որուն կարգապահութեանց սկզբունքներուն համակերպելու պարտաւոր է:

Գ.Ա.ՄԷՐ

Բարիդաքնակ աղգային մը 100 ոսկի նուէր զրկած է Հիւանդանոցին, իր ննջեցեալներու հոգւոյն պատարագ մատուցուելու համար Ս. Փրկչի մատրան մէջ: — Նոյնպէս, Բարիդաքնակ Տիգրան Սան Քէլէկեան 300 Քր., իբր տաքեկան նուէր:

Գ.Ա.ԽԱՌԱՅ Ի ԿԻՆԸ

Օ. ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՖԻՆ

Այրից վիպակիս մէկ քանի կէտերը չահագրդուած են մեր համակրելի գրագէտը: Հարցումներ կ'ուղղէ դաւառի զրոյներու և փափաք կը յայտնէ որ կեղծիքի քօղը պատռելով՝ ցուցակուի դաւառացի կ'նոջ հոգին: Քսան երկու տարի յարատեւ դաւառի էն մուծ խորշերը անցուցած կեանքս, չատ բաներ ուսումնասիրել տուած է ինծի, ընտանեկան կեանքի վրայ, սկսեալ հողագործ գեղերէ մինչեւ քաղաքակրթութեան նշոյլով լուսաւորուած կեդրոններու մէջ: Կը սիրեմ արդէն թափանցել ընտանեկան խաւերը, կուղեմ միտքս չարչրկել որոնելով անոնց իսկական վիճակը:

Ընտանեկան կոյր համակերպութիւն բուրող այն կեղծ պարկեշտութիւնը այնքան մեծ քայլ առած է որ կին մը, չատ անգամ լըրջամիտ, եթէ երբեք իր բնութեան ձայնին անսալով ուղէ անկեղծօրէն երջանկութիւն մը կազմել, կը ձաղկուի ու կ'այսպէս զինքն իր յարաբերութիւնները նախապատիւ են, ըլլան օրինաւոր, ըլլան ապօրէն: Պակաս չեն բարոյական զոհերը անկեղծութեան:

Կինը կին է, ինչպէս մայրաքաղաքին մէջ՝ նոյնպէս յետին գիւղը: Բնութիւնը անոր առւած է կարգ մը ինքնայատուկ առանձնաշնորհութիւններ զորս ձեռքէն կորցած է աւանդամուծութիւնը: Միջավայրի և տարադի տարբերութիւնն է որ կը դատէ դաւառացին իր Պոլսեցի քոյրէն: Անիկա չունի ինքնակամ անտեսութիւն և միշտ կը թեւադրուի ուրիշէ մը: Ընտանեկան յաճախեցէպ ցաւեր ատկէ ծնունդ կ'առնեն որոնք կը խեղդուին տունին անձուկ որմերուն մէջ: Այս պարագային, միութիւնը դադրելով այլեւս սրտի կեանք մը յօրինելէ, առփական վիճակի կը վերածուի որուն հետեւանքը անշուշտ պիտի ըլլայ ապականութիւնը:

Ինչ կեանքեր կը փճանան արդեօք որոնք ուրոյն ուրոյն երջանկութեան զրախաներ պիտի յօրինէին, եթէ երբեք գիտակցաբար

կազմութիւնն ամուսնութիւնները : Ուրկէ՞ գըտ-
նեմ ամէն ատեն ու ամէն տեղ Արուսեակներ
որոնք, զարմանալիօրէն ճարպիկութեամբ մը
գործերնին գլուխ հանէին ոտքի տակ առնե-
լով անտեղի ու շահախնդրական անուշիւհե-
րը : Ու ասոր համար է որ կ'ըսեմ թէ ապո-
րինի յարաբերութիւնները կը վխտան :

Իրաւ պաշտելի է պարկեշտութիւնը, և
սակայն օր ըստ օրէ նուազելու վրայ է մեր
մէջն ալ, քանի որ կեղծիքի քօղին տակ
կարգ մը շահախնդրական ու փրցուն նկատում-
ներ են որ կը դառնան ամուսնական կապե-
րու շուրջ :

Արուսեակին միջադէպը որ Ալիսի արեւ-
ելեան կողմի գեղերուն մէջ անցած է, վեր
կ'առնէ ծայրը քօղին այն ամէն անտեղու-
թիւններուն որ կը գործունին գաւառի ընտա-
նեկան յարկերուն մէջ ընդհանրապէս : Այդ
յարկերու ապերժանկութեան առիթ տուող
չատ մը պատճառներ եթէ մէջ բերուն, և
պիտի տեսնուի անշուշտ թէ, կոյր համակեր-
պութեան լաջակը պատռած կինը՝ երեւան
կու գայ լպիւր բոսորագեղ այտերուն շիկնոտ
կեղծաւորութեամբը : Կին է, զգայուն է,
տարփոտ : Իր կնոջային անձուկ իրաւասութեան
մէջ, քանի որ ձայն չունի, կեղծիքով գոր-
ծելու, յարդին տակէն ջուրը հոսեցնելու տը-
րամադրութիւնը ա'լ իրեն համար արմատա-
ցած ու նուիրագործուած բարք մըն է :

Էրեկը չի սիրեր, ինչ ընէ, դժուար է խո-
բելը, մըջոցնէր կը պակսին. կնոջային հրա-
պուրալից ակնարկ մը, անմիջական համակեր-
պում մը առնական կամքին առջեւ, համբոյր
մը, նազանք մը բաւական է իր մանածը
ներկելու : Ահաւասիկ աւանդական պարկեշ-
տութիւնը իր տուփային երանգներովը :

Հողագործ գեղերու մէջ մանաւանդ յա-
ճախադէպ է աղտեղութիւնը որուն գարշ
բոյրը կը ցնդի բաց ու մաքուր մթնոլորտին
մէջ ու այդ շեղակոյցը անտարբերութեան
ճեղհներմակ պատառուով մը կը սքողուի : Թէ-
պէտ անցորդի մը համար շուշանի մը ամբը-
ծութիւնը կը ցուցադրէ, բայց մէջներին ապ-
րողներուն համար այնպէս չէ : Բարեկամս վար-
ժապետ մը կը պատմէ թէ դպրոցի բարձրա-

գոյն կարգի աշակերտներ ամբողջ նշանուած
են, երեսնին գոյն մնացած չէ անքունութե-
նէն : Գեղացի տղաքները մինչեւ տասներկու
տարեքնին զարմանալի կորով մը ցոյց կուտան
ուսման : Տասներեքին մէջ կը սկսին պղտո-
րիլ, որուն շարժառիթը մայրը կ'ըլլայ ու
տասնընորս—տասնըհինգին նշանուածը ամէն
յոյս ի դերեւ կը հանէ :

Անցածները գեղացիի նամակ մը կարգա-
ցի, գրուած լուրջ կղերականի մը գրիչով :
Կին մըն էր դարձեալ ցուցակողը որուն հա-
մար ամուսնալուծում կը խնդրէր էրիկը : Ա-
նոր համար այլեւս անընդունելի եղած էր
կինը ու դըժնա, այն պահուն՝ ուր ինքը հեշ-
տանքով, պանդխտութեան մէջ, կը քծնէր
կնկան մը որ իրեն սէր կը խոստանար քսա-
կին հնչուն ոսկիներուն փոխան :

Գեղացի կինը երբեմն քաջութիւնը կ'ու-
նենայ յաղթելու մարմնոյ ցնցումներուն,
դիմագրաւելու տկա՜րութիւններուն. բայց
տարինները զինքը իր սարսափներն մէջ ինչ-
պէ՞ս չի մոլորեցնեն վերջապէս :

Ամէն միջավայր իր մոլութիւնը ունի, իր
սահմանին մէջ. երկու անուոր գեղ մըն ալ
իր հոգւոյ թրթռումներուն մէջ ունի իր շե-
ղումները ու տակաւին ուրանալ իրականու-
թիւնը, խաբել չէ՞ ինքզինքը : Ուրիշ բան է
թէ գաւառներու մէջ անտարբերի մը համար
իգական սեռը զգաստութեան տիպար մըն է,
չառեր այդպէս կուղեն հաւատալ ու ներկա-
յայնել այնպէս : Բայց եթէ խղճմտօրէն թա-
փանցես խորը, տխուր իրականութիւնը պիտի
պարզուի աչքիդ առջեւ ու պիտի զգաս գար-
շահոտ բոյրը տիղմին որ կեղծիքի պատան-
քով պատնուած՝ կը մնայ միշտ տիղմ : Հայր
մը, ընտանիքի զաւակներու տէր, դրսերեւ-
ոյթով ջերմեռանդ, ամէն օր եկեղեցին չհան-
դիպած գործի չսկսիր : Աստուածածինը իր
մոմը ունի միշտ անոր համար վառ. կը շինէ
ապօրինի յարաբերութիւն մը այրիի մը հետ
սը յուսահատ՝ թերեւս կամքովը կը համա-
կերպի : Տղան հօրը հետքերուն վրայ կոխե-
լով կը գտնէ գաղանիքը ու ինքն ալ կ'ըմ-
բռնինէ այդ հրապուրոտ խնձորը եւ երբ մայ-
րը իմանալով կը զգուշացնէ դաւակը անուղ-
ղակի կերպով, «Հօրմէս սորվեցայ» կը գո-

յէ տղան մօրը երեսին : Ու մայրը , խեղճ մայրը , զաւակներուն վրայ գուրդուրօտ կ'ընը սեփ սեւ եղած էր իր մաղձոտ մտահոգութեանը մէջ : Ո՞ր մէկը պատմեմ :

Ուրախ եմ որ Զեղի նման համակրելի դժբաղէտի մը լուրջ զիտողութիւններուն առարկայ դարձեր է Այրիս որ իսկապէս հոգին է վիպակիս հերոսութիւնը :

Գաւառական պատերազմներու երբեք մտացածին երեւակայութեան արդիւնքներ չեն , այլ անկեղծ տպաւորութիւններ : Կը սիրեմ ընտանեկան յարկը , անձուկ սրտովս : Կուզեմ ընտանեկան յարկի երջանկով թիւները պատմել գաւառացի քոյրերուն :

Կ'ընը ընտանեկան յարկին մէջ : Ահա կ'էտ նպատակիս :

ՇԱՀԱՍՐԻԿ

ՊԱՇՏՈՒՄՍ



Անկէ ի վեր՝ երբ աչքերդ հոգեհմայ Պոստեցան հրաժեշտ ցաւին տակ՝
Էութիւնըս մեզ մը պատեց եւ հիմա ,
Տարածութեան մը մէջ կ'ապրիմ անյատակ :

Գաղափարներս , զգացումներս անհամար Արիքներու պէս կը փչին , կը ծփան ,
Կեանքս ովկէան մըն է հիմա ինձ համար ,
Ուր երեւում ու տարած է ամեն բան :

Տարակոյսի . հարցումներու մեծագեղ Շղթայ մը միտք հեք ուղեպարս կը պրկէ ,
Ամենեւ պարզ իրողութիւնն իսկ . տասնեղ ,
Կնքիւ կ'ըլլայ ու միտքս կը շարժուի :


— Ի՛նչ , կ'ըսեմ . երբ արեւը կը ծագի ,
Արծաթափայլ լուսնակը կը տօգունի .
Ինչո՞ւ կեանքը վախճանի մը կը հակի ,
Տիեզերքը արդեօք կեանք մը ո՞ւնի :

— Կ'ապրիմ արդեօք... հ'ն , բերեւս - ո՞վ
գիտէ —

Կը սխալիմ , կ'ըսեմ նոյն իսկ ինքզինքիս :
Անուղապէս գիտեցա՞մ լոկ սա է թէ ,
Միտք կը սիրեմ , միտք կը պատեմ ինձ
հոգիս :
Վ . .

ՎԻԷՆՆԱԿԱՆ ՄԻԽԹԵՐԵԱՆՑ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ



Մասիսի ծաւալը և Շարաթերթի նեղ սահմանը չեն ներքեր որ ընդարձակ տեղ մը տանք զպրոցական հանգէսներու նկարագրութեանց . ապա թէ ոչ , մանրամասնաբար պիտի պատկերացնէինք Վիէնական Միխթարեան Հարց Բանկալթի վարժարանին ամալկըջի հանգէսը որ կատարուեցաւ անցեալ շաբաթ օր , դոհացուցիչ տպաւորութիւն մը թողլով բոլոր ներկաներուն վրայ որոնք թէ՛ ծանօթացան աշտկերաններուն ուսումնական վիճակին և թէ՛ հաճելի ժամանց մը վայելեցին : Մնաց որ , օրաթերթերը կատարեցին այդ համարատուութիւնը , որով նոր բան մը ծանուցած չպիտի ըլլայինք : Յիշենք միայն , թէ վարժարանին 1902—1903 տարեշրջանի աշակերտներուն թիւը եղած է 146 որոնց 48ը գիշերօթիկ , և թէպէտ չէնք ին վրայ յաւելումներ եղած են՝ բայց դարձեալ Տնօրէնութիւնը ստիպուեր է աշակերտներ մերժել ինչ որ ամենէն դժուարն ապացոյցն է այդ կրթական հաստատութեան յարաճուն յաւաքութեան :

Այս տարուան չրջանաւարտներն են՝ Պ . Պ . Յակոբ Պէյլէրեան , Արամ Յովսէփեան , Դրիդոր Դերձակեան , Խաչիկ Մ . Պարոնիկեան (Կ . Պոլսեցի) և Միքայէլ Արտանկիւլեան , Պետրոս Բէյլիւեան , Յովհաննէս Հարունեան (Էնկիւրցի) որոնք իրենց վկայականները ստացան Վարժարանին տեսուչ Հ . Մէնէլիւեանի ձեռքէն որ այս տարեւ շա'տ գեղեցիկ ու գործնական ըմբռնումներու վրայ հիմնուած յորդորական մը խօսեցաւ անոնց :

Աշակերտները՝ հայերէն , թուրքերէն , ֆրանսերէն , գերմաներէն և անգլիերէն լեզուներու մէջ իրենց կարողութիւնը ցոյց տուին տրամախօսութիւններով ու ճառերով : Նոյնպէս գործիական երաժշտութեան մէջ՝ ջութակահարութեամբ : Անցողաբար յիշենք՝ Ուսումն . Խորհուրդի ատենապետ Տոքթ . Վահրամ Էֆ . Թորգոմեանի մտացի ու գեղատիղաւակը , Արամ Թորգոմեան , որ ֆրանսերէն ճառ մը արտասանեց , և որիւր փոքրատի աշակերտ մը՝ Ա . Եփրեմեան՝ որ և լա Արիստոմոս օտարաւոր մը արտասանեց , երկուքն ալ յաջող կերպով :

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Կովկասէն հասած լուրերու նայելով, Առաքել Ծատուրեանց՝ ծերունի միլիոնատէրը ու բարեգործը որ անձնասպան եղաւ՝ երեք-ուկէս միլիոն ռուսկի կտակ մը թողուցեր է, որուն մէկուկէս միլիոնը պէտք է յատկացուի՝ Տաճկահայ թեմերուն մէջ 16 դպրոցներու և պատասպարան—արհեստանոցներու բացման. Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին տրամադրութեան ներքեւ. դրուած է 300,000 ռուսկի, և Ս. Հայրապետին տրամադրութեան ներքեւ մէկուկէս ռուսկի՝ Պարսկաստանի մէջ դպրոցներ բանալու համար, եւայն՝ Կտակակատարներու գլուխը կը գտնուի Պ. Կարապետ Նղեա՛ց՝ բարեյիշատակ Սանասարեանցի կտակակատարը: Այս կտակը պատրաստուած է տասը տարի առաջ և նոտարարական վաւերացումով հաստատուած է: Պ. Ծատուրեանց թէեւ երկու տարի առաջ ալ նոր կտակ մը շինած է Երեւանի մէջ, բայց հաւանական է և յիշատակելի՝ որ առաջինը միայն գործադրելի նկատուի:

Հռոմի մէջ գումարուած Պատմական Համաժողովի դիւանը ոսկեղօծ արծաթ միտալ մը նուիրած է Տոքթ. Վահրամէֆ. Թորգոմեանի որ, ինչպէս՝ Ժամանակին ծանուցինք Մասիսի մէջ, Խոտլիոյ Համալսարաններէն վկայուած հայ բժիշկներուն վրայ ֆրանսերէն աշխատութիւն մը ներկայացուցած էր այդ Համաժողովին: Տոքթ. Թորգոմեանի ընտանիքական ու կենսագրական երկասիրութիւնները ծանօթ են մեր մէջ, և այն պատուաբեր գնահատումը որուն առարկայ կ'ըլլայ դիտական օտար մարմնի մը կողմէ՛ ալ՝ հաճոյքով կ'արձանագրենք: Վերեւ յիշուած աշխատասիրութիւնը հրատարակուիլ սկսած է La France Médicale թերթին մէջ:

Արեւելի մէջ կը կարդանք թէ Բարիլի առեւտրական աշխարհագրական ընկերութեան յունիս 22ի նիստին մէջ՝ Անատոլիոյ երկաթուղիներու ընկերութեան նախկին պաշտօնեայ Պ. Լեւոն Բարբերդեան հրապարակաստութիւն մը ըրեր է՝ Փոքր Ասիոյ տնտեսական առեւտրական վիճակին վրայ:

Ս. Հայրապետը՝ այն Կոնգակէն զատ որով Կիլիկիայ Կաթողիկոսին կը յանձնարարէր տօնել Ս. Էջմիածնի Հիմնարկութեան 1600ամեակը, Կոնգակ մըն ալ զրկած է Ն. Ամենապատուութեան, որով սրտագինա կը շնորհաւորէ Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին օծումը, և բարեմաղթութիւններ կ'ընէ անոր արդիւնաւոր պաշտօնավարութեան համար:

Ս. Պատրիարք, ընկերակցութեամբ քանի մը եկեղեցականներու, չորեքշաբթի օրը այցելեց Կայս. Թանգարանը ուր մանրամասնաբար զիտեց լոյր հնութիւնները քանի մը ժամ:

Վեֆեսիկի Միթիթարեան Հարց Գատըզիւղի վարժարանին ամսվերջի հանդէսը կատարուեցաւ կիրակի օրը ստուար բազմութեան մը ներկայութեամբ: Զանազան լեզուներով երգեր երգուեցան ու տրամախօսութիւններ արտասանուեցան: Կիւրեղեան Աբբահայրը բազմաթիւ ճոխ գիրքեր զրկած էր յառաջագէտ աշակերտներուն նուիրուելու համար: Վարժարանը այս տարի երեք չրջանաւարտ ունի. Պ. Պ. Ստեփան Բիստակեան, Վահան Արփիարեան և Խաչիկ Մադուլեան որոնք համակիր ծախհարութեանց մէջտեղ ստացան իրենց վկայականները:

Հարսանեկան հանդէս. — Մեր աշխատակից Արշակ Ալպոյաճեանի Աղն. քրոջ՝ Օր. Թագուհի Ալպոյաճեանի պսակադրութիւնը՝ Ստեփան էֆ. Կ. Գինեպանեանի հետ՝ վայելուչ հանդիսաւորութեամբ կատարուեցաւ երկուշաբթի օրը Ղալաթիոյ եկեղեցին ուր բազմաթիւ հրաւիրեալներ ներկայ էին: Շնորհաւորութիւնք կատարուեցան Խորհրդարանի սրահին մէջ, շքասեղանի մը շուրջը: Այս բերկրալի առթիւ, մեր խնդակցութիւնները կ'ուղղենք նորապսակ ամուլին ինչպէս նաև Ալպոյաճեան Պօղոս և Արշակ էֆ. ներքեւ:

Ամերիկաբնակ բարեսէր ու դրասէր վաճառական Յովհաննէս էֆ. Թաւլանճեան, — դրաւոր քարոզներու մրցումին մեկննաւոր, — այս անգամ ալ 20 ոսկի նուէր զրկած է՝ կարօտ ուսուցիչներու Օգնութեան Միտակին:

Արսօնաք Կ. Ս. ԻԻԹԻԶԱՆ

Տպագրութիւն ՍՐԵՒՆԻՔ Օրագրի

ՀԱՐՈՆԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մեծ փողոց Բերայի Թիւ 186

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

ՀԱՐՈՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ ՄԵՏԱՐՍԵՂԷՆ ՈՒ ԲԱՄՊԱԿԵՂԷՆ

Ք. ՆԱՐԱՄԻՒՐԱ ԵՒ ԸՆԿ. Վաճառատունը պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան եւ իր բազմաթիւ յաճխորդներուն թէ մեծ քանակութեամբ ճարձակապէս կերպասեղէններ բերել տուած է, վերջին նորաձեւութեանց համաձայն, վայելուչ եւ տոկուն:

Այս կերպասեղէնները ցուցադրուած են ճարձակապէս վաճառատունը, Մեծ փողոց Բերայի, Թ. 186, ուր այցելողները պիտի զննան անոնց տեսակին ընտրութիւնը ու աղնուութիւնը, միեւնոյն ատեն օգտուելով բացառիկ կերպով զեղչուած գիներէն, իր քիտասիօնի առթիւ: 3—4

ԼԻՔԻՏԱՍԻՕՆԸ ՊԻՏԻ ՏԵՒԷ

Յուլիս 9/22էն մինչեւ 2/15 Օգոստոս 1903

ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

— — —

Դաւթեան Դարձակալութիւնը որոշած ըլլալով նոր զարկ մը տալ հրատարակչական ճիւղին՝ հրաւէր կը կարգայ մեծաւոր հեղինակներուն որպէս զի իրենց գրական երկերը փութան ներկայացնել Դորձակալութեան:

Հրատարակելի գիրքերուն ձեռագիրը եւրեք օրինակ ըլլալու է՝ Մէարիֆի օրէնքով:

Դորձակալութիւնը կը ստանձնէ գիրքերու վաւերացման, տպագրութեան, փորձերու սրբագրութեան կազմի, եւ այլ աշխատութիւնները:

Կը կատարէ նաեւ տպագրական ամէն տեսակ գործեր, այցեւորման, շրջաբերական, նամակագրութեան, աղղեր, դպրոցական բարենիշ, պատուանիշ, վիճակացոյց, վկայագիր, հաշուագիր, եւ այլն եւ այլն:

Դիմել առ ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

Խորասանճեան խան, Սիրեհնի, Կ. ՊՈԼԻՍ

3—5

ՀԱՆՔԻՏԱՍԻՕՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՐԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանօթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, Թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսընի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս լանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաձիւղ, Դաւթիա, Թօփճըլար ճատտէսի, Թ. 101:

3—30

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ԵՒ ԻՐ ՅԵՂԸ, հեղ. Բրոժ. Ա. Ալպրէկս, Թարգմ. Մ. Կ. Նազիկեան ԷՖ. Սեւային առողջաբանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովրդական գիրքը երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ Ը. Մատթէոսեան տպարանէն: Դին 5 զրոյ: Վաճառման կեդրոնատեղին է Պալեցն գրատուն Կ. Պոլիս:

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ անգլիէրէնէ հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսանողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով զբաղողներու համար: Դին 8 զրոյ: Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով: Կեդրոնատեղի Սաքսեան տպարան, Կալաթա:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԳԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Գ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վեասք	240,000,000	Փր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Ճ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վեասք	99,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքնին» ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաւխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԻ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւոյ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի դերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքնին ապահովագրողը Ձերժ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարգման (accumulation des bénéfices) ՅՅՈՒ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան իրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԻԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏԵՐԵՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաժ Քաթըքը Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան, գործակալ Միրան Էֆ. Դաւիթեան:

Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԿԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փաղոց, Թագսիմ, քիւ 61

Չըսանեան արաւքման

Պալպալեան ամէն օր ահուայի ամէն տեւակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան ո եւ է ժամուկաշիւի է դիւել: Պալպալեան կ'երաշխսորէ իր լեցուցած ու շինած ահաւաները: Յորեկները աշուայ քաշել տալու համար ուր վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղբասներուն ձեռք

“AU TALON D'OR,”
O TALON S'OR

ԲԱՐԻՉԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Գ Ա Ր Լ Օ Ա Շ Ն Ա Մ Ե Ա Ն

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կալաթա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար,—մանաւանդ չափու վրայ շինուիլը,—կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

Կ. Յ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից, սպագրական գործերու պատրաստութեան հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% ղեղչ.

Ծանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ Յ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՍԱՄՍՈՆ

ՖԷՆԻԿՍ ԷՍԲԱՆԵՕԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴ.

Հրդեհի եւ կեանքի ի ԲԱՐԻՉ

Դրամադրութիւն՝ 63,228,000 ֆրանք: Դրամա-

տուն ի Կ. Պոլիս՝ Բրէտի Լիօնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ ճիւղին

ԲԱՌԼՕ ԱՀՆԱՄԵԱՆ

Կալարա, Վոյվոսա փողոց Թիւ 103



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սնննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅՅԱՅԻՉ ԿԱՅՍ. ՊԱՐԱՍԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու բութի եւ ձեռքի միանգամայն մեխանիկ կը գտնուի:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրադործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԷՐ
ՄԱՍՆԱՎԱԿԱՆ

ՌԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամպէին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիա, Թրամպէին կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԻԻՏՍԻ

Չարչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

կատարեալ երաւիտաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՅ. ԱՊԱՀՈՎՈՂԴ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճենն)

ՊՍՏՈՒԱԿԱՅ. ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿՆԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԴ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդեմ հրդեհի (ի ԲԱՐԹԱՅԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Մովային ապահովագր. Ընկ. (ի ՃՆՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամաւորներն է ի Կ. Պոլիս, Քոնստի Լիօնե
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօթուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ-ՄԱՆԿԱՐԱՐԶ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց
(Վկայեալ Բաքիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարեալ գործեալ դրութիւններով:

Բարիզի, Նախիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էֆրքերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ. Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա, Թարլա Պաշը, թիւ 136:

Մանօր. — Հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը 1-4 (Ը. Ն.): Երեքշաբթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները:

20—20

ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրիորդ մը, որ խիստ լաւ մէթոտ մը ունի նորալարժները մարդկու դաշնակահարութեան, կը փափագի այցելութեամբ դաս տալ տուններու մէջ: Դիմել՝ Մասիսի խմբագրութեան:

HOTEL «FERAH»

ՕԹԷԼ «ՖԵՐԱՆ»

Բրինքիւրօ, Նիզամի պողոտային վրայ, ծովահայեաց, ընդարձակ պարտէզներու մէջ: Վարձակալը, Առաքել Տերեկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրաժանօթ նախկին Գաղար ճաշարանը, յանձն առած է նիւթական ամէն զոհողութիւններ ընել՝ իր բաղմամբ յաճախորդներուն հանդատութեանը համար:

Դիմելը չափաւոր. լաւ եւ մաքուր մանուշակաւորը բաց է Եւրոպական մայիս մէկէն սկսեալ:

9—10

ՏՈՔԹ. Ն. ՄԱՍԻՍ (Բերա, Թագսիմ փողոց, ք. 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ, կը դարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, սառմորսի, ալեաց, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային ախարութիւնները, գաղղիական ախտերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: